

10
20

ԿՈԼՏՆԱՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. Պ. ԱԳԱՊՈՎ, Բ. Ա. ԳԵՐԱՍԻՄՈՎ,
Ն. Ն. ՏԱՐԲԵՅԵՎ

ՍԵՂԱՆԻ
ՃԱԿՆԴԵՂ

635

Ա - 17

ԳՅՈՒՂՂՐԱՑ 1935 ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ. ԽՈՐՃՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

3-16262

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԲԱՆՁԱՐԱՆՈՑԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

635

12-17

Ա. Պ. ԱԳՎՈՎՈՎ, Բ. Ա. ԳԵՐԱՍԻՄՈՎ, Ն. Ն. ՏԱՐԲԵՅԵՎ

ՍԵՂԱՆԻ ՃԱԿՆԴԵԼ

ԹԱՐԳՄԱՆՎԱԾ Ե ՈՌԻՍԵՐԵՆ ՅԵՐԿՐՈՐԴ՝
ՎԵՐԱՄՏԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ



ԻՆՎ. № 6117

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1935

7 JAN 2013

20537

ՇՆԹԵՐՑՈՂԻՆ

Դրքում տրված են հիմնական տեղեկություններ՝ սեղանի ճակատի գույքեղը կոլտնտեսություններում և խորհունտեսություններում աճեցնելու մասին։ Սկզբում հեղինակը ծանոթացնում է ընթերցողներին ճակատի կազմության և բույսի կյանքի հետ, հետո բացատրում ե՝ ինչպիսի հողեր են անհրաժեշտ ճակատի ցանքի համար, ինչպես նրանք պարարտացնել և մշակել, ինչպես կատարել ցանքը և խնամքը, ինչպես կատարել բերքահավաքը և ինչպես պահպանել բերքը։ Առանձին մեկնաբանվում են սերմնաբուծության հարցերը և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու միջոցները։

Հրատարակչությունը դիմում ե ընթերցողներին՝ խրնգըրելով հայտնել՝ զտակաբ ու հասկանալի՝ լեզուքը, բնչը նրանում պետք ե փոխել ուղղել և լրացնել։

Նամակները պետք ե հասցեյագրել՝ Յերևան, Գլուղի հրատին։



3933-87

ՍԵՂԱՆԻ ՀԱԿՆԴԵԼՆ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱՌ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների բան-
ջարեղենի դաշտերում, բանվորական և կոլտնտեսական
տնամերձ պարտեզներում, — ամեն տեղ մթին ե տալիս
սեղանի ճակնդեղի կարմրականաչ տերել:

Ամբողջ Խորհրդային Միության մեջ նրա ցանքերը
բանում են մոտ 200 հազար հեկտար տարածություն։ Սե-
ղանի ճակնդեղն այն բանջարեղեններից մեկն ե, վոր կա-
րելի յե մշակել և բարձր հյուսիսում և ամենահարավային
շրջաններում։

Ճակնդեղի արմատը պարունակում ե շատ ոգտակար
սննդանյութերը Նրա մեջ կան նաև հատուկ նյութեր, այս-
պիս կոչված՝ վիտամիններ, վորոնց բացակայության դեպ-
քում՝ կերակրի մեջ՝ մարդիկ և կենդանիները հիվանդա-
նում են։ Ճակնդեղը գործ են ածում, կարելի յե ասել
այնպիսի հիմնական ռւտելիքներ պատրաստելու համար,
ինչպես են՝ բորշը, սառնապուրը, վինեգրետը։ Ճակնդեղը
չորացնում են, թթու յեն դնում, նրանից պահածո և կվաս
են պատրաստում։ Նա շատ գործածական, համով բանջա-
րեղեն ե, վորն ոգտագործվում ե թե հասարակական մննդի
ճաշարաններում, թե յուրաքանչյուր աշխատավորի տանը՝
ճաշի համար։

Ճակնդեղը համեմատաբար պահանջվու չե. պարա-
տացման դեպքում լավ փարթամանում ե և մշակվում ե
առանց բարդ ձեռքի և ձմեռը լավ պահպում ե։

Նրա բերքը կարելի յե հասցնել հեկտարից մինչև
20—25 տոննիւ

Ճակնդեղի տերեներով կերակրում են անասուններին՝ ինչպես թարմ վիճակում, նույնպես և սիլոսի մեջ:

Սեղանի բոլոր արմատապուղներն ել տալիս են առողջ և բազմազան սնունդ. Նրանց մեջ ճակնդեղը բռնում է լեռկրորդ տեղը՝ առաջնությունը զիջելով միայն գագարին:

ԻՆՉ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱԼ ՃԱԿՆԴԵՂԻ ՄԱՍԻՆ

Ճակնդեղն ամենահին բանջարանոցային բուլութից մեկն ե. նա հայտնի լի լեղել զանազան ժողովուրդների, վորոնք ապրել են 3500—4000 տարի առաջ: Սեղանի, կերի և շաքարի ճակնդեղներն առաջացել են վայրի ճակնդեղից, վորի հալբենիքը գտնվում է Միջերկրական ծովի ափին: Մեզնում, Միության մեջ, նա պատահում է Սևծովի ափերին: Վայրի ճակնդեղն ունի ճյուղավոր, բարակ և փայտացած արմատներ, վորոնք ուտելու համար պիտանի չեն: Նա ծաղկում և սերմ ե տալիս ցանված առաջին տարին: Նա միամյա բույս ե: Բազմադարյան մարդկաբին աշխատանք գործադրվեց վայրի ճակնդեղի վրա, մինչև վոր սաացվեց լեռկամյա ճակնդեղի ներկալիս կուլտուրական բույսը: Առաջին տարին սեղանի ճակնդեղն առաջացնում է հաստ, մսոտ, հյութալի արմատ, վորը և մենք գործածում ենք սննդի համար: Տնկված արմատը լեռկրորդ տարին արձակում ե ցողուն, ծաղկում և տալիս է սերմեր:

Ճակնդեղի արմատը ծածկված է բարակ մազանման արմատիկներով, վորոնցով նա հողից վերցնում է մննդանյութերի լուծույթներ և ջուր: Խոշոր, կանոնավոր ձևի արմատ կարելի լի աճեցնել միայն բավական խոր և լավ մշակված հողերում: Դա հատկապես կարևոր է այն տեսակների համար, վորոնք ունեն յերկար արմատներ:

Ճակնդեղի արմատն ըստ լաբության կտրելով, մենք տեսնում ենք, վոր նա շերտավոր կազմվածք ունի, ըստ վորում տարբեր տեսակներում այդ շերտերը լինում են տարբեր խտությամբ գունավորված:

Ուժեղ միատեսակ գույնը սեղանի ճակնդեղի արժեքավոր հատկությունն ե, վորովհետև նրա հետ ե կապված արմատի մասնյութի քնքուշ և լավ մահը: Բացի դրանից, լավ գույն ունեցող արմատներից պատրաստված ուտելիքներն ունեն գեղեցիկ և գուրեկան տեսք:

Ճակնդեղի նորմալ բույսը պետք է ունենալ լավ զարգացած տերեններ:

Տերենների դերը նրանումն ե կայանում, վոր նրանց միջոցով բույսն ողից սնունդ է ստանում: Բացի դրանից, տերենները պաշտպանում են բռնար վատակար, խիստ տաքությունից: Խնամքի ժամանակ ամեն մի վասվածք, ջարդվածք կամ տերենները ժամանակից շուտ քաղելը թուլացնում է բռնար: Այդպես թուլացած բույսերից լավ հատկության բարձր բերք ստանալ հնարավոր չե: Այստեղից հետեւում ե, վոր ճակնդեղը կանոնավոր աճեցնելու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել նրա տերենների պահպանման և լավ զարգանալու վրա:

Հարավային շրջաններում ճակնդեղն սկսում է ծաղկել արմատները տնկելուց 50—55 որ հետո, իսկ ավելի հյուսիսում՝ 60—65 որ հետո և ծաղկելը շարունակվում է 25—40 որ: Զոր և շոգ լեղանակին ծաղկելն ընթանում է ներդաշնակ և արագ, սառը յեղանակին՝ լեռկարում ե:

Մերմացու ճակնդեղի ծաղկաբեր ցողունների գագաթը (ալսպես կոչչված՝ ծաղկակիրները) խիտ ծածկված են ծաղկիներով:

Ճակնդեղը խաչածե փոշոտվող բույս ե: Այսպես կոչչվում են այն բույսերը, վորոնց ծաղիկները փոշոտվում են վոչ իրենց, այլ ուրիշ ծաղիկների փոշով: Ճակնդեղի մի բույսից մլուսին փոշու գլխավոր փոխադրողը քամին ե: Բացի քամուց, ճակնդեղի փոշոտմանը մասնակցում են մի քանի տեսակ միջամտներ:

Ճակնդեղի ծաղիկներն այնքան խիտ են նստած, վոր հենց վոր նրանք փոշոտվում են և նրանցում մկնվում ե

սերմերի զարդացումը, նրանք ել ավելի յեն մոտենում և համաճում են: Այսպիսով միքանի համաճած ծաղիկներից ստացվում ե մի սերմ կծիկ: Նա պարունակում ե լուր մեջ այնքան առանձին սերմիկ, վորքան ծաղիկ միասին համաճել են: Ահա ինչու, յերբ ճակնդեղի սերմերը կանաչում են, մի կծիկոց միշտ ել առաջանում ե ծիլերի փունջ՝ յերկու, երեք և ավելի ընծլուղներից: Դրա հետ ե կապված ճակնդեղի խնամքի գլխավոր մեթոդ՝ նրա ծիլերի ժամանակին նոսրացումը:

Սեղանի ճակնդեղի բույսերը միշտ ել յերկու տարում են կանոնավոր զարդանում: Վրչ, վոչ ամեն անգամ: Լինում են դեպքեր, վոր ցանելու առաջին առարին նկատվում են առանձին, այսպես կոչված՝ «վորճ» բույսեր («լվետուխա»), վորոնք խոտան են, վորովհետեւ նրանց արմատներն անպետք են ուտելու համար. նրանք պետք ե վոչնչացնել: Լինում ե և հակառակը, յերբ սերմի համար անկած արմատները չեն տալիս ծաղկացումներ և մնում են ամուլգրանք ել անպետք են:

Վորճակալումը և ամլությունը մինում են: զանազան պատճառներից: Վորճը շատ ե լինում, յերբ ճակնդեղի ծիլերը լինթարկվում են առավոտյան սառնամանիքների աղղեցության, կամ յերբ

նկ. № 1
Վորճակալած ճակնդեղ յերկարած յերաշտի պատճառով բույսերի աճեցողությունը ժամանակավորապես կանգ ե առնում: Վորճակալման դեմ պետք ե պայքարել ցանքը ժամանակին կատարելով և հողը փուխը ու մոլախոտերից մաքուր պահպանելով: Այդպիսի խնամքի հետևանքով հողը պահում ե մեծ քանակությամբ խոնավություն, վորով



նվազում և յերաշտի վասակար աղղեցությունը: Հյուսիսային շրջաններում պետք ե ցանել հյուսիսային ծագում ունեցող սորտեր (որինակ՝ «բորդո»): Տվյալ անտեսության համար յուրաքանչյուր սորտի պիտանիությունը վորոշում է տեղական գյուղատնտեսը:

Ամուների առաջանալը համաշյա մշտագես կախում ունի չորային գարնան յեղանակից, վատ անկելուց և տընկելու համար խիստ թառամած արմատներ գործածելուց: Ամլության դեմ պայքարելու արմատական միջոցներն են մայրարմատների կանոնավոր պահպանումը և հնարավորին չափ վաղ և վորակով ու կանոնավոր տնկելը:

Տերեվային ճակնդեղ (տերևաբազուկ). — Բացի արմատային ճակնդեղից ցանում են նաև տերևային ճակնդեղ, վորը կոչվում ե մանգոլի: Տերևային ճակնդեղի արմատը բարակ ե, ճյուղավորված, փայտացած և ուտելու համար տնպետք: Ուտվում են մոնղոլի թե խոշոր տերենները և թե մսու, հյութալի տերևակոթերը, վորոնք ունենում են 8—10 սանտիմետր լայնություն և պարունակում են շատ մնադարար նյութեր:

Տերևային ճակնդեղի ցանքը կատարվում ե արմատայինի հետ միաժամանակ: Մեկ ու կես ամսից հետո կատարում են տերևների առաջին քաղը, իսկ հետագայում քաղում են ամեն անգամ տերևները հասունանալիս:

Խոշոր տերևակոթ ունեցող տերևաբազուկի սորտերը գործածում են յեփած, իսկ մանր տերևակոթ ունեցողները թրթնջուկի նման տրորում և գործ են ածում սալաթ պատրաստելու համար:

Տերևային ճակնդեղի արմատները փետրվարին-մարտին ջերմոցում տնկելով, կարելի յե ստանալ վաղ գարնան կանաչեղեն:

ԻՆՉՊԻՄԻ ԿԼԻՄԱՅՈՒՄ ԼԱՎ Ե ԱՇՈՒՄ ՍԵՂԱՆԻ
ՀԱՎԱԴԵԼԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԻՆՉՊԻՄԻ
ՀՈՂԵՐ ԵՆ ՊԵՏՔ

Ինչպես ասվեց՝ ճակնդեղի հայրենիքը տաք յերկոր-
ներն են։ Յուր պահանջները ջերմության վերաբերմամբ
նա պահպանել ե մինչև այսոր։ Այդ յերեսում ե թեկուզ
հետեւյալ որինակից։ Ճակնդեղի սերմերը 4 աստիճան ջեր-
մության գեպքում ծլում են 22 որից հետո, 10 աստիճանի
գեպքում՝ 10 որից հետո, իսկ 15 աստիճանի գեպքում՝
5—6 որից հետո ճակնդեղն ամենից լավ աճում ե այն-
պիսի տեղերում, փորտեղ լինում ե յերկարատես անսառնա-
մանիք շրջան՝ ամառվա ընթացքում հավասարաշափ տե-
ղացող անձրեներով։ Ողի 15—25 աստիճան ջերմության
գեպքում ճակնդեղն աճում ե ավելի արագ։ 8 աստիճան
ջերմության գեպքում նրա աճեցողությունը կանգ է առ-
նում։ Ընկնելով գարնան 2—4 աստիճան սառնամանիք-
ների տակ, ճակնդեղի նոր յերեացող ծիլերը խիստ մվաս-
վում են և հաճախ ամբողջովին վոչնչանում, իսկ յեթե
չեն վոչնչանում, այդ գեպքում հետագա աճման ընթաց-
քում տալիս են շատ փորձեր։ Ճիշտ ե, ճակնդեղն իրեւ
բանջարեղեն ցանելու գեպքում կարող ե աճել և հեռավոր
հյուսիսում, բայց փորքան գեպի հյուսիս ե գնում, այնքան
ընկնում ե նրա բերքատվությունը։

Ճակնդեղի նորմալ աճի համար անհրաժեշտ ե հողի
բարեխառն խոնավություն։ Յերկարատես չափից ավելի խո-
նավության գեպքում նրա աճեցողությունը յետ ե ընկ-
նում և ճակնդեղը հիվանդանում ե։ Բայց ճակնդեղը վատ
ե զարգանում, կամ նրա աճեցողությունը բոլորովին կանգ
ե առնում նաև յերկարատես յերաշտից, դրա համար ել չո-
րային շրջաններում լավ բերք կարող ե ստացվել միայն
վոռոգումով։

Հոդի տեսակները։ — Ճակնդեղի ամենաբարձր բերք
ստացվում ե փուփր, խոր և պտղավետ հողերում։ Այդպի-
սի հողեր են կավա-ավազալին, սևահող և ավազա-կավալին
հողերը (նրանց լրացուցիչ պարարտացումով)։ Ճակնդեղի
համար լավ հողեր են վողողման յենթակա հողերը, յեթե
այդ հողերը յերկար ժամանակ ջրով ծածկված չեն մնում։
Ինչպես ցույց ե տալիս փորձը, չորացրած ճաճճային հո-
ղերում ճակնդեղը կարող ե տալ բարձր բերք, յեթե այդ
հողերը կրացման են յենթարկվել։ Կավային հողերը գո-
մազրով լավ պարարտացնելուց հետո նույնպես կարող են
ողտագործվել ճակնդեղի համար։ Համարյա անպետք են
ճակնդեղի համար ծանր, կաշուն, կավային՝ քիչ հումուս
պարունակող և կավային յենթահող ունեցող հողերը։

Լավ ե համարվում հավասար, հարթ մակերեսով կամ
թեք լանջերով հողամասը։ Շատ ցածրադիր տեղերը, վո-
րոնք նպաստում են ջրի կուտակմանը և պահելուն, ինչ-
պես և խիստ թեք լանջերը չի հանձնարարվում ոգտա-
գործել ճակնդեղի ցանքի համար։

ՀԱՎԱԴԵԼԻ ՏԵՂԸ ՑԱՆՔԱԹՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՅԵՎ
ՆՐԱ ԼԱՎ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Ցանքաշրջանառության մեջ սովորաբար ճակնդեղին
տալիս են յերկու կամ յերեք տարի առաջ գոմազրով պա-
րարտացրած տեղը և միայն պաղպղացած հողերում պետք
ե ցանել գոմազրով պարարտացնելուց հետո ճակնդեղին
հատկացրած հողամասը պետք ե մաքուր լինի մոլախոտե-
րից, այդ պատճառով ել ճակնդեղի համար լավ նախորդ-
ներ կարող են լինել կազամբը, վարունզը, պամիզորը, վո-
րոնցից հետո հողամասերն ավելի քիչ են մոլախոտված լի-
նում։

Կարտոֆիլից հետո լավ կինի ճակնդեղ ցանել վո-
րովինետև այդպիսի հողամասերում ճակնդեղը հիվանդա-
նում ե քոսով։

ԻՆՉՊԵՍ ՊԱՐԱՐՏԱՅՆԵԼ ՀՈՂԱՄԱՍԸ ՃԱԿՆԴԵԼԻ ՀԱՄԱՐ

Ճակնդեղը յուր աճման ու կանոնավոր զարգացման համար կարիք ունի զանազան սննդանյութերի: Ամենից հաճախ կարիք ե զգացվում մտցնել այնպիսի սննդանյութեր, ինչպես են կալին՝ ազոտը, ֆոսֆորը և կիրը, ըստ վորում ճակնդեղն ոգտագործում ե կալի մեկուկես անդամ պէլի, քան ազոտի 3—4 անդամ ավելի, քան ֆոսֆոր և կիր:

Մննդանյութերը պետք ե հողը մտցնել գոմաղբի կամ հանքային (աղհետափական) պարարտանյութերի ձեռվ:

Ցեթե ճակնդեղը ցանելու յեն թարմ գոմաղբով պարարտացրած հողամասում, այդ դեպքում գոմաղբն անհրաժեշտ ե մտցնել և վարել աշնանից: Գոմաղբի քանակը կախված ե հողի բնույթից: Ուժեղ պնդացող, պաղպղացած ու կեղեակալող հողերում գոմաղբը մտցվում ե հեկտարին 50—60 տոնն: Փուխը, ավազախառն հողերի համար գոմաղբի նորման կարելի յե իջեցնել 30—40 տոննի՝ մեկ հեկտարին: Քաղաքներին մոտ գտնվող բանջարանոցային տնտեսություններում գոմաղբը կարելի յե փոխարինել քաղաքային աղբով՝ ինչպես թարմ, նույնպես և քայլքայլած վիճակում: Ինչպես ցույց ե տալիս փորձը, քաղաքային աղբի պարարտացնող հատկությունը հավասար ե թարմ գոմաղբին: Դրա համար ել այստեղ, վորտեղ ալդ հնարավոր ե, քաղաքային աղբը պետք ե լայնորեն ոգտագործել դաշտերը պարարտացնելու: համար: Քաղաքային աղբը մտցնելու նորմաները համարյա նույնն են (կամ քիչ ավելի), ինչ դոր գոմաղբով պարարտացման նորմաները:

Այն տեղերում, վորտեղ կան առրջի ճահիճներ, առրջը պետք ե լայնորեն ոգտագործել պարարտացման համար: Փորձը ցույց ե տալիս, վոր հող մտցված առրջը բուլսերին տալիս ե շատ սննդանյութեր և բացի ալդ, ավելացնում ե հողի փարունությունը:

Թարմ տորֆը չի կարելի ճահճից հանելուց հետո անմիջապես հողը մտցնել՝ իբրև պարարտանյութ: Այն պետք ե դասավորել փոքր կույտերով՝ քամուն տալու համար և կիր շաղ տալ վրան: Տորֆն այդպիսի կույտերով պետք ե մնա մոտ մի տարի: այդ ժամանակվա ընթացքում պետք ե 2—3 անդամ բահով շուռ տալ և գոնե մի անդամ ջրել աղբաջրով: Ավելի լավ արդյունքներ են ստացվում, յերբ թարմ տորֆը նախապես գործ են ածում գոմում իբրեցամքար: Պարարտացման համար նախապատրաստված տորֆը պետք ե հողը մտցնել և վարել աշնանից՝ մի հեկտարին տալով 100 տոննից վոչ պակաս:

Այն հողամասերում, վորոնք առաջուց պարարտացված են լեղել գոմաղբով կամ նրան փոխարինող պարարտանյութերով (քաղաքային աղբ, առրջ), ճակնդեղ կարելի յե ցանել հանքային պարարտանյութեր տալուց հետո:

Հանքային (արհեստական) պարարտանյութերից ճակնդեղին տալիս են սուպերֆոսֆատ, ծծմբաթթվային ամոնի և կալիումի աղ: Սուպերֆոսֆատը պարունակում ե ֆոսֆոր, ծծմբաթթվային ամոնին՝ ազոտ և կալիումի աղը՝ կալի: Ճակնդեղի համար արհեստական պարարտացում մտցնելու նորմաները կախում ունեն հողի նախկին պարարտացումից՝ գոմաղբով և պետք ե սահմանվեն տնտեսության կողմից: Որինակ՝ կարելի լե կիրառել հետևյալ նորմաները: սեահողերում մտցվում ե հեկտարին 2—3 ցենտներ ծծմբաթթվային ամոնի, 3 ցենտներ սուպերֆոսֆատ և 2 ցենտներ կալիումի աղ: պաղպղով հողերում 3—4 ցենտներ ծծմբաթթվային ամոնի, 4—5 ցենտներ կալիումի աղ: Արհեստական պարարտանյութերը պետք ե մտցնել հողի գարնանային մշակման ժամանակ՝ ցանքից առաջ:

Հողը մտցնելուց առաջ սուպերֆոսֆատը, ծծմբաթթվային ամոնին և կալիումի աղը թիով լավ խառնում են:

Պարարտանյութ մտցնելու լերկու ձեւ կա՝ սերմը ցանելու ժամանակ համատարած շաղ տալով և շարքերի մեջ

մտցնելով։ Շարքերը մտցնելն ավելի լավ միջոց ե, վորովին բույսի կողմից պարարտանյութն ավելի լրիվ ե ոգտագործվում։

Շաղ տալու ձևով մտցնելու համար կիրառվում ե պարարտանյութի հատուկ շարքացան։ Նրա բացակայության դեպքում կարելի յե սգտագործել թիթեռնիկավոր ցանող ապարատով հացահատիկային շարքացանը, կամ թե խոփիկները հանած շարքացանը։ Յերկու գեղքումն ե՝ պարարտանյութը հավասարաչափ բաշխելու համար՝ պետք ե շարքացանի ամբողջ լախությամբ կարթերից կախել քաթան կամ տախտակ իջեցնելով այն մինչև հողի մակերեսը։

Ծանը կավային հողերում, պաղպոլ և ճահճանալու հակում ունեցող հողերում, ինչպես ցուց ե տալիս փորձնական կախանների աշխատանքը, ճակնդեղը կարող ե լավ բերք տալ միայն կիր մտցնելու դեպքում։

Թե ինչ աղդեցություն ե ունենում կիր մտցնելը ճակնդեղի բերքատվությունը բարձրացնելու դորում, կարելի յե տեսնել լենինգրադի գյուղատնտեսական ինստիտուտի բանջարանոցավին կայանի փորձերից, վորոնք կատարվել են 1929 թվին։ Այդ փորձերում ճակնդեղի բերքը ֆուֆորային և կալիական պարարտանյութ մտցնելիս ստացվեց հեկտարից 26,9 տոնն, իսկ այդ պարարտանյութը ըի հետ 4,5 տոնն կիր մտցնելիս բերքը բարձրացավ մինչև 57,8 տոննի, այսինքն՝ կրկնակիրից ավելի։ Իրեն հատկանիշ այն բանի, վոր հողը կարիք ունի կրի, այն ե, վոր ալդպիսի հողերի վրա առատությամբ բուժնում ե թրթնչուկը (թթվաշուկը)։

Կիր մտցնելու նորման՝ լինելով հողի կարիքից, սահմանվում ե 3—5 և մինչև անգամ 7 տոնն՝ մեկ հեկտարին։ Կիրը մտցվում ե աշխանից և նրա մտցնելու ամենալավ միջոցը պարարտանյութ ցանող մեքենայով շաղ տալն եւ

կիր մտցնելու լավագույն նորմաների մասին՝ տվյալ անտեսության համար պետք ե խորհրդակցել ՄՏԿ-ի գլուղատնտեսի կամ մոտակա փորձակալանի հետ։

ԻՆՉՊԵՍ ՄՅԱԿԵԼ ՀՈՂԵ ՃԱԿԱՆԴԵՂԻ ՀԱՄԱՐ

Հողի մշակումը ճակնդեղի համար սկսվում ե աշնանից, ըստ հաւարավորության՝ նախորդ կուլտուրան հավաքելուց անմիջապես հետո։ Յեթե հողամասը շուտ ե ազատվում (ոգոստոս, սեպտեմբերի սկիզբը), այդ դեպքում շատ ոգտակար ե կատարել խողանավար։ Խողանավարը լրիվ վոչնչացնում ե յերկամյա մոլախոտերի կանաչելուն, վորոնք խողանավարից հետո դեռ չսերմակալած, աշնանավարի ժամանակ վոչնչանում են։ Խողանավարը կատարվում ե չորս խոփանի արագավար գութաններով՝ 6—7 սանտիմետր խորությամբ։

Անկախ նրանից՝ խողանավար կարվի, թե վոչ հողամասն աշնանը պետք ե խոր հերկեր։ Աշնանավարի խորությունը տարբեր հողերում պետք ե տարբեր լինի։ Բավական խոր հողաշերտ ունեցող հողերը պետք ե վարել 20—22 սանտիմետր։ Սազր (պաղպոլ) հողերը վարում են այնպիսի խորությամբ, վորպեսզի պաղպոլի անբերը շերտը չափվի հողի յերեսը։

Գարնանը, հենց վոր ձյունը վերանում ե և հնարավոր ե գաշտ գուրս գուլ, փոցխվում ե ծանը լիներկաթյա ցաքաններով։ Փուխր և մոլախոտերից ազատ հողերը ցանքից 1—2 որ առաջ կուլտիվատորներով լիներու ուղղությամբ (կաշաձե), մշակվում են և միաժամանակ ցաքանվում են։

Մոլախոտերով վարակված լիներու գեղքում գարնան կրկնավարը պարտադիր ե՝ թե ծանը կավային, խիստ պընդացող հողերում և թե ցածրադիր հողերում։ Գարնանավարի խորությունը պետք ե՝ 3—4 սանտիմետրով սազր լինի աշխանավարից, այսինքն՝ 17—18 սանտիմետր։

Հարավային և հարավ-արևելյան շրջաններում դարնանավարի հետևանքը լինում է հողերի շուտ չորանալը, դրա համար ել գարնանավար չի կատարվում: Այստեղ կիրառվում է հողը կուլտիվատորներով մշակելը:

Այն տեղերում, վորտեղ հողը վարի սաղր շերտ ունի կամ ստորերկրյա ջրերը մտկերեսին մոտ են, ցանքից առաջ թմբեր են շինում:

ԽՆԴՐԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՃԱԿՆԴԵՂԻ ՑԱՆՔԸ

Ճակնդեղի սերմերը միահավասար և շուտ են կանաչում, յերբ հողը լավ տաքացել ե և նրա մեջ խոնավության բավարար պաշար կա: Սովորաբար ճակնդեղի ցանքը կատարվում ե գարնան հացահատիկների ցանքից անմիջապես հետո: Միության տարբեր շրջաններում ցանքի ժամկետները տարբեր են. հյուսիսային գոտում և մեր լեռնային շրջաններում՝ մայիսի 1-ից մինչև 10-ը, նախալեռնային շրջաններում՝ ապրիլի 20—30-ը, իսկ հարավային շրջաններում և դաշտավայրական գոտում՝ ապրիլի մեկից մինչև մայիսի սկզբները: Ծանքն ուշացնել չի կարելի և աշխատանքը պետք ե տանել արագ տեսպով:

Ցանքից առաջ պետք ե ստուգի սերմի ծլունակությունը: Դրա համար սերմակույտի տարբեր տեղերից կամ, լեթե սերմը պարկերի մեջ ե, ըստ հնարավորության բոլոր պարկերից վերցնում են 300 գրամ սերմ:

Վերցված սերմից առանց ընտրելու համարում են իրար հետեւից յերկու նմուշ՝ 100-ական կծիկ ամեն մեկում: Յուրաքանչյուր նմուշ հավաքածակի դարսվում ե թրջած մաքուր շորի կամ թաղիքի վրա, վորը և դնում են ափայիլ մեջ և ծածկում ֆաներայով, կարտոնով կամ ապակով ու դնում տաք տեղ: Հետազայում պետք ե հետեւ, վորպեսզի ծլելու ժամանակ շորը արունակ թաց լինի: Սերմի ծլելը տեսուս ե 14 որ: Հաշվումը կատարվում ե 6 րդ և 14-րդ որը: 6-րդ որը ծլած կծիկներից ցույց են տալի:

3933-82

Ճեղույթի մեջ մեծ անտեսական նշանակություն ունի միաժամանակ ծլող սերմերը ցանքելուց հետո ել միաժամանակ են ծլում: Լավ սերմերը 6-րդ որը պետք ե տան 65—70-ից վոչ պակաս ծլած կծիկներ: Հաշվումից հետո ծլած կծիկները հեռացնում են, իսկ չծլածները դնում են իրենց տեղը և 14-րդ որը նորից են հաշվում ծլածների թիվը, Յուրաքանչյուր նմուշի սերմերի հաշվումը և գրանցումը կատարվում ե առանձին: Յերկու նմուշների ծլած կծիկների թիվը գումարում և բաժանում են յերկուսի. բաժանումից ստացված թիվը ցույց կտա ծլունակության առկուսի:

Յերկու նմուշների ծլած կծիկների թիվը մեծ տարբերության դեպքում, որինակ՝ մեկ նմուշում 14-րդ որը ծլել ե 50 կծիկ, մյուսում՝ 75, փորձը պետք ե կրկնել: Նմուշների մեջ թույլատրելի տարբերությունը 10 կծիկից ավելի չպետք ե լինի: Լավ սերմերը ծլեցնելու 14-րդ որը հարցուրից տալիս են 75-ից վոչ պակաս ծլած կծիկ (75%):

Սերմերը ծլեցնելուն պետք ե լուրջ ուշադրություն գարձնել և արդ աշխատանքը կատարել նախորոք: Յուրաքանչյուր կոլտնտեսություն և խորհանտեսություն ցանք կատարելիս պետք ե համոզված լինի, վոր լուր ցանած սերմը լավ ծլունակություն ունի:

ՑԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

Ճակնդեղը, վորպես կանոն, ցանքում ե հարթ մակերեսի վրա, միաշարք՝ լայն շարքամիջերով: Այդպիսի ցանքի առավելությունն ե շարքամիջերի հետադա մեքենայացված մշակության հնարավորությունը, դրա համար ոգաագործելով տրակտորային և ձիու ուժը:

Այն կոլտնտեսություններում, վորտեղ շարքամիջերի մշակումը կատարում են ձիաքարշություն, միշարքանի ցանքը կարելի յե փոխարինել լերկգծանի ժապավինածե ցանքով:

գծերի մեջը 25 սանտիմետր տարածությամբ, իսկ ժապավենների մեջը՝ 50 սանտիմետր: Ցանքի այդպիսի մեջ հնարավորություն և տալիս ժապավենների միջի տարածությունը մշակել ձեռքի, իսկ գծերի մեջը՝ ձեռքի կուլտիվատորներով (պլանետ): Նա բարձրացնում և բերքատվությունը, բայց ավելի շատ բանում և պահանջում:

Ճակնդեղի ցանքի համար կան հատուկ ճակնդեղացան (համակցված) մեքենաներ, շարքերի մշտական հեռավորություններով, վորոնք միաժամանակ և սերմն են ցանում, և պարարտանյութը շաղ տալիս: Ճակնդեղացան մեքենաներն աշխատում են թե ձիով, թե տրակտորի ուժով: Հատուկ ճակնդեղացան մեքենա չլինելու դեպքում ճակնդեղի ցանքի համար կարելի յն ոգտագործել՝ սովորական, առաջնաքաշ ունեցող և գուղերի ցանող ապարատով շարքացան մեքենան: Այդպիսի շարքացանից վերցնում են ավելորդ խոփիկները, իսկ մնացածները կարգավորող տախտակի միջոցով դասավորում են ճակնդեղի ցանքի համար ընդունված միջազգային տարածության համաձայն:

Ցանքից առաջ շարքացանը պետք է կարգավորել ցանքի նորմայի համաձայն: Կարգավորելու համար պետք է ունենալ հետեւյալ տվյալները.

1. Ընթացքի անվի շրջագծի յերկարությունը (չափում և ուղեղակալով):

2. Ընթացքի անիմսերի միջի տարածությունը.

3. մի հեկտար տարածության վրա շարքացանի անիվների պառույտների թիվը.

4. մի հեկտար ցանելու համար անհրաժեշտ սերմիքանակը՝ կիրովամներով:

Որինակ՝ ընթացքի անվի շրջագծի յերկարությունը հավասար է 2,5 մետրի, խոփիկների թիվը և 6, խոփիկների միջի տարածությունն է 50 սանտիմետր: Բազմապատկելով խոփիկների թիվը նրանց միջի տարածությունով, ստանում ենք ընթացքի անիմսերի միջի տարածու-

թյունը. մեր որինակում նա հավասար կլինի (6×50) 300 սանտիմետրի (3 մետր): Բազմապատկելով ընթացքի անվի շրջագծի յերկարությունն անիմսերի միջի տարածության վրա, կստանանք շարքացանի բոնած լախությունը մի պտույտի ժամանակ, վորը ավյալ որինակում հավասար է ($3 \times 2,5$) 7,5 քառակուսի մետրի: Մի հեկտար տարածությունը (հավասար է 10000 քառ. մետրի) բաժանելով մի պտույտի ժամանակ բոնած տարածության վրա, ստանում ենք շարքացանի պտույտների թիվը մի հեկտար տարածության վրա ($10000 : 7,5 = 1333$ պտույտ): Շարքացանի այդչափ պտույտների թիվը պետք է լրիվ ցանված լինի սերմի այն քանակությունը, վորը մենք նշանակել ենք մի հեկտարի համար: Շարքացանը ցանվելիք սերմի նորմայի համապատասխան կարգավորելու համար անհրաժեշտ չեանվին տալ անպայման 1333 պտույտ, այլ բավական է վերցնել պտույտների թիվը 20 անգամ պակաս, այսինքն $66 \frac{1}{2}$ պտույտ:

Մեր որինակում $66 \frac{1}{2}$ պտույտը կհամապատասխանի 500 քառ. մետր ցանքի տարածության կամ հեկտարի $\frac{1}{20}$ -ին: Յեթե հեկտարին ցանվում է 12 կիլոգրամ սերմ, մեր որինակում՝ անվի $66 \frac{1}{2}$ պտույտի ժամանակ 6 խոփիկով պետք է ցանվի 600 դրամ սերմ:

Յեթե համապատասխան չափով անիվը պտտելուց հետո ստացվում է սերմի նորմայից ավելի, պետք է կոճերը ներս տալ յեթե քիչ ե՝ պետք է գուրս քաշել: Մերմի պահանջվող նորման ստանալու համար անհրաժեշտ է կարգավորել կոճերը: Փոքր տարածությունները կարելի յեւ ցանել ձեռքի սերմնացան «պլանետ» մեքենայով:

Մի հեկտարին՝ 50 սանտիմետր միջազգային տարածությամբ ցանելու դեպքում պահանջվում է 12 կիլոգրամ նորմալ ծլունակություն ունեցող սերմ ($80^{\circ}/_{\text{o}}$ վոչ պակաս): Յերկագծանի ժապավենաձեւ ցանքի համար ժապավենների մեջը 50 սանտիմետր և գծերի մեջը՝ 25 սանտիմետր տալու

գեղքում անհրաժեշտ ե 15,6 կիլոգրամ սերմ: Ցած ծլունակության դեպքում սերմի քանակը համապատասխան չափով պիտի ազելացնել: Յերբ բոլոր նախապատրաստական աշխատանքները վերջացել են, սերմերը լցնում են շարքացանի արկղը և կատարում են ցանքը:

Ցանքը պետք է կատարել ուղիղ շարքերով: Ծուռ-մուռ շարքերում ճակնդեղի մշակման աշխատանքը մեքենաների միջոցով անհնարին եղանում: Շարքացանի գնալու առաջն գիծը պետք է գծել լարի կամ ցցեր խփելու միջոցով:

Սերմը պետք է ցանել՝ ծանր հողերում 2—2,5 սանտիմետրից վոչ խոր և թեթև փուլսը հողերում՝ 3—3,5 սանտիմետրից վոչ խոր: Ավելի խորը ցանելու դեպքում սերմերը կարող են շնչահեղձ լինել, վորովհետև ողի հոսանքը հողի մեջ կդժվարանա: Դրա համար ել ցանքի ժամանակ սերմնացանի խոփիկներից ծանրություններ չպետք է կախել: Մեր բանջարանոցներում սեղանի ճակնդեղը դիսավորապես ցանվում է վորոշ կուլտուրաների թմբերին: Այդ դեպքում հաճախ տնկում են բներով՝ թրջած սերմերով:


ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ՑԱՆՔԸ

Ճակնդեղի ցանքի խնամքը կալանում է ջրելու, վրեցման, քաղհանի, նոսրացման և վնասատուների ու հիվանդությունների դեմ պարագար կազմակերպելու մեջ:

Կոլտնտեսականները և խորհանտեսությունների բանկորները պետք է խնաման, վոր ճակնդեղի բարձր բերքը լիովին կախված է ժամանակին և կանոնավոր այդ աշխատանքները տանելուց և նրանց ճիշտ կազմակերպումից ու բանվորական ուժի դասավորումից:

Ամենից առաջ մենք կանգ կառնենք ճակնդեղի մշակման այն միջոցի վրա, վորը հատկապես բուլսի համար առանձնակի նշանակություն ունի:

Պայմարը հողի կեղեվակալման դեմ: —Ճակնդեղի խնամքը հաճախ կարիք է լինում սկսել մինչև ծիլերի լերևալը: Քիչ շեն այն դեպքերը, իերը ցանքից հետո տեղում են ուժեղ անձրևներ, վորոնց հաջորդում է քամոտ և արևոտ լեղանակ: Հողի մակերեսն ուժեղ կարծրանում է, գոյանում ե կեղեւ: Նույնն է ստացվում և ջրելուց հետո: Մինչև անգամ բարակ կեղեւը դժվարացնում է ծիլերի դուրս գալը հողի յերես, իսկ 0,5-ից մինչև 1 սանտիմետր հաստության կեղեւից ճակնդեղի ծիլերը դժվար են դուրս գալիս և շատերը կեղեւի տակ վոչնչանում են: Առանձնապես այդ նկատ-



Նկ. № 2. Առաջնական ցանք

վում է կավալին հողերում: Ցանքերն ուժեղ կերպով նոսրանում են և արմատների բերքը խիստ ընկնում է: Դրանից խուսափելու համար կեղեւը պետք է վոչնչացնել անձրևից կամ ջրելուց 1—3 որից վոչ ուշ քանի նա ուժեղ չի պնդացել (քեզ վիճակում): Կեղեւ ջարդելու աշխատանքը կատարվում է՝ ոռացին ցաքանով (Նկ. № 2) կամ թեթև «պիգզագ» փոցիով:

Յեթե սոտացիոն ցաքան չկա, իսկ թեթև փոցխերը կեղեր չեն ջարդում, այդ դեպքում պետք է ողտագործել ծանր լերկաթե փոցխեր, վորոնք պետք ե բանեցնել շարքերի լայնությամբ։ Այդ աշխատանքը կատարելիս պետք է շատ զգույշ լինել և փոցխերուց առաջ անհրաժեշտ ե ստուգել սերմերի դրությունը հողում։ Յեթե սերմերը ծիլեր չեն տվել, այլ միայն ծկթել են, այդ դեպքում ծիլերը վասելու վատանգ չկա, և փխրեցումը կարելի յէ կատարել մինչև 2 սանտիմետր խորությամբ։ Յեթե սերմերը ծլել են և ծիլերը գտնվում են հողի մակերեսին մոտ, այդ դեպքում՝ յեթե կեղեր հաստ չե, մինչև ծլելը կարելի յէ փըխրեցում չկատարել։ Իսկ յեթե կեղեն արևակն է պնդացել, վոր ծիլերը նրա տակ կոչնչանան, փխրեցումն անհրաժեշտ է։ Փխրեցում պետք ե կատարել մինչև անդամ հաշվի չառնելով այն, վոր ծիլերի մի մասը կարող է վնասվել։


Մոտացիոն ցաքանը և փոցխը կիրառում են նաև մոլախոտերը վոչնչացնելու համար այն դեպքում, յերբ ծիլերի դուրս գալն ուշանում ե, իսկ դաշտն սկսում է ծածկվել մոլախոտերով։ Այս դեպքում նույնպես պետք է շատ զգույշ լինել ու նախորոք ստուգել՝ թե սերմերը վորքան են ծլել։

Խնամք՝ ծիլերն յերեվալուց հետո։ — Տաք յեղանակին և հողում խոնավություն լինելու դեպքում, ճակնդեղի մատղաշ ծիլերը լերենում են 8—12-րդ որը։ Ցուրտ յեղանակին ծիլերի հայտնվելն ուշանում է 5—6 որով, իսկ չորավին յեղանակին, մանավանդ ուշացած ցանքի դեպքում, ծիլերն ավելի ուշ են յերենում։

Ծիլերն լերեալուց 3—4 որ հետո կատարվում է ճակնդեղի շարքամիջերի առաջին փխրեցումը։ Այդ աշխատանքը չի կարելի ուշացնել, վորովհետև ճակնդեղի մատղաշը բույսերն սկզբնական շրջանում թույլ են զարգանում, իսկ կոշտացած հողում նրանք սկսում են նվազել։ Բացի դրանից, շարքամիջերի առաջին փխրեցման ուշացումն այն հետևանքն է ունենում, վոր մոլախոտերն իրենց արագ

աճեցողությամբ անցնում են ճակնդեղի ծիլերից և ամբողջովին ծածկում են դաշտը։ Շարքերի ուղղությունը կորչում է, շարքամիջերի մեքենայական մշակումը դառնում է անհնարին և ցանքը փրկելու համար այլ միջոց չի մնում, բացի ամբողջը ձեռքով քաշհանելուց։ Այդ աշխատանքը մի հեկտարին կպահանջի 75—100 մարդուր։ Մի քանի հեկտար ճակնդեղ ցանելու դեպքում տնտեսությունում ճեղքվածքն անխուսափելի յէ, մանավանդ վոր քաղհանը հաճախ համընկնում է խոտարքի հետ։

Այդպիսի ճեղքվածքներ, դժբախտաբար, դեռևս հաճախ են կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում։ Դրա համար հանցավոր են նրանք, ովքեր չեն կարողանում կանոնավոր և ժամանակին կազմակերպել ցանքերի քաղհանը։



Նկ. № 3. „Ուկրայինկա“ ցաքան

Աշխատանքը ժամանակին սկսելու դեպքում, մինչև անդամ ուժեղ մոլախոտված հողամասերում, ձեռքով քաղհանի հարցն ամրողջությամբ վերանում է ու փոխարինվում և շարքամիջերի գործիքների աշխատանքով։ Ձեռքով քաղհանի համար մնում է միայն մոլախոտերի մաքրումը շարքերում։ Այդ աշխատանքը կատարվում է բույսերի նոսրացման հետ միաժամանակ։ Շարքամիջերի փխրեցումը և միաժամանակ մոլախոտերի դեմ պայքարելու գործիքների թվին և պատկանում «Ուկրայինկա» ցաքանը (Նկ. 3)։ Նա

աւճի յերկու ձեռք աշխատող մասեր՝ տափակ յեռանկյունի դանակներ և փիլրեցնող դրեր։ Դանակները գործածվում են շարքամիջերը փիլրեցնելու և մոլախոտերը վոչնչացնելու համար, դրերը կիրառվում են միայն շարքամիջերը փիլրեցնելու համար։


«Ուկրայինկա» ցաքանը կարելի ի՞ն աշխատեցնել ձիու և տրակտորի ուժով։

Բացի «Ուկրայինկա»-ից փիլրեցման համար կիրառվում են մի ձիանի պլանետը, ձեռքի պլանետը և ձեռքի հողուրադներ։ Բոլոր այդ գործիքներն ոգտագործվում են ինչպես շարքամիջերը փիլրեցնելու, նույնպես և մոլախոտերի դեմ պալքարելու համար։ Լավ են աշխատում վիՄԵ-ի (Համամիութենական մեքենայացման ինստիտուտ) № 1 և 2 կուտիվատորները, բայց նրանց կիրառմը հնարավոր է միայն այն գեպքում, ինթե ցանքը կատարված է 23 շարքանի սերմացանով։ Իսկ ինթե ցանքը կատարված է այլ սերմացաններով («Կրամնալա զվեզդա», «Ելզորտի» և «Սակկի»), այդպիսի կուտիվատորներից ոգտվել չեն կարելի, վորովնետե նրանց բոնած լախությունը չի համապատասխանում հիշալ սերմացանների լախությանը։

Առաջին փիլրեցման աշխատանքների վորակը վորոշելու համար բրիդագիրը պետք է ստուգի՝ լիովին վոչնչացված են արդյոք մոլախոտերը շարքամիջերում, արդյոք ամեն տեղ լավ փիլրեցրած՝ հողը 4—5 սանտիմետր խորությամբ և հողով ծածկված առանձին բուլյերը մաքրված են արդյոք հողից։

Առաջին փիլրեցումից հետո ճակնդեղի փոքրիկ բուլյումերը համերաշխարեն բոյ են քշում և 10—12 որից հետո տալիս են 2 զուրդ իսկական տերեւ։ Ալժմ պետք է սկսել նոսրացնելու աշխատանքները։ Նոսրացումն ուշացնել չի կարելի, վորովնետե ճակնդեղի բուլյերն սկսում են իրար նեղել և ձգվել պալքար և գնում լուսի, խոնավության և սննդի համար։ Յեթե նոսրացում չի կատարված, ալդ դեպ-

քում միքանի որից հետո բուլյերն զգալի կերպով փոխում են իրենց տեսքը։ տերեները բարտկում-նեղանում են և ստանում են բաց-կանաչ կարմրագույն գույն, տերեսակոթերը յերկարում են ու բարակում։ Բուլյերը կախ են ընկնում այնպես, ինչպես զոգ ժամանակ՝ խիստ թառամելու դեպքում։



Նկ. № 4. Ճակնդեղի բուլյուի տերեները ուշ նոսրացնելու գեղեցում (ձախ), ժամանակին նոսրացրած (աջ)

Ալդ զրության հասած ճակնդեղի բերքը սաստիկ ընկնում եւ և լեռբեմն ամբողջովին փշանում։ Վերն աստծներից կատարելապես պարզ եւ, վոր բերքատվության համար պալքարելիս նոսրացման աշխատանքները պետք է կատարել ժամանակին։

Ճակնդեղի նոսրացումը պետք է կատարել բուլյուի շրջապատի հողը փիլրեցնելու հետ միասին։ Աշխատանքը ճիմնականում կատարվում է ձեռքի հողաւրագներով և ձեռքով, դրա համար ել մի հեկատը ճակնդեղը նոսրացնելու համար գործադրած աշխատանքը՝ նախելով բանվորների փորձառության և կատարման ժամկետին, հասնում է

25—40 մարդորվաս: Աւշացնելու դեպքում աշխատանքն զգալի չափով ավելանում է:

Ցանքերի նախնական փնջավորում կատարելուց հետո նոսրացման աշխատանքները խիստ թեթևանում են: Շարքերի հակառակ ուղղությամբ բաց են թողնում վորեւ կարող մեքենա, վորի կտրող մասերը դասավորում են իրարից այնքան հեռու, վորպեսզի նրանք՝ կտրելով ծիլերի մի մասը, լուրաքանչյուր 4—5 սանտիմետրի վրա թողնեն մի քանի բույսերից կազմված փնջեր: Հենց այդ ե փնջավորման ձևը:

Իբրև փնջավորման գործիք կարող ե ծառալել «Ռւկայինկա» ցաքանը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հատիկային աերմնացան մեքենան, վորի վրա խոփիկների փոխարեն դնում են կարող թաթեր:

Փնջավորումն ամբողջովին չի փոխարինում նոսրացումը, այլ միայն հեշտացնում ե աշխատանքը և վորոշ ժամանակ բույսերի խտությունից առաջացող փասխ առաջն առնում ե: Վերջնական նոսրացումը պետք ե կատարել ձեռքով:

Նոսրացման ժամանակ իրարից հավասար հեռավորության վրա թողնվում են միայն ալեղի ուժեղ բույսերը: Հատկապես խիստ ուշադրություն պետք ե դարձնել բույսերի հեռավորությունը կանոնավոր պահպանելու վրա՝ սերմնաբուծական ցանքերի դեպքում:

Յուրաքանչյուր առանձին դեպքում ալիք տարածությունը կախված ե սորտից և նողի բերրիությունից: Յերբեք հողերում կլոր ու տափակ արմատ ունեցող սորտեր ցանելիս բուլսը բուլսից թողնում են 8—10 սանտիմետրի վրա: Նույն սորտերի համար աղքատ հողերում անհրաժեշտ ե թողնել 10—12 սանտիմետր: Յերկար արմատով սորտեր ցանելու դեպքում բերբի, փուլսը հողերում տարածությունն ավելանում ե մինչև 12—14 սանտիմետր, իսկ աղքատ հողերում ևս ավելի՝ մինչև 14—16 սանտիմետր: Բուլսերի

միջի տարածությունը կիսով չափ պակսում ե, յեթե յենթագրում են ոգտագործել մատղաշ վիճակում, այսինքն՝ ձակնդեղի մատղաշ արմատները՝ տերևներով, հակառակ դեղքում՝ նոսրացման ժամանակ պետք ե միանգամբից տալ լրիվ տարածություն: Մոլախոտերը և ձակնդեղի ավելորդ բուլսերը նոսրացման ժամանակ պետք ե հանվեն շարքամիջերից:

Նոսրացման ժամանակ շարքամիջերի հողը խիստ պընդանում ե և այն պետք ե փխրեցնել: Փխրեցումը կատարվում ե նոսրացումից հետո, համենայն դեպս 3—4 որից վոչ ուշ: Փխրեցման համար գործ են ածում վերը հիշված շարքամիջերի մշակման գործիքներից վորեւ մեկը: Յեթե շարքամիջերի փխրեցման համար պիտի գործածվեն ձեռքի պլանետներ, այդ դեպքում՝ աշխատանքն արագացնելու համար՝ նրանք պետք ե հարմարեցնել ձիաքարը ուժի: Վորքան ել մենք խնամքով կատարենք առաջին նոսրացումը, այսուամենայնիվ միշտ ել մնում են չնկատված ավելորդ փնջեր 2—3-ական բուլսից: Բուլսերն այդ դրությամբ թողնել չի կարելի, վորովհետև նրանք հետագա զարգացման ընթացքում իրար կնեղեն և կստացվեն ծոված արմատներ, դրա համար ել անհրաժեշտ ե կազմակերպել յերկրորդ նոսրացման աշխատանքները:

Յերկրորդ նոսրացումը կատարվում ե առաջինից 2—2^{1/2} շաբաթ հետո: Աշխատանքը դժվար չե: Նա կպահանջի 10—12 սարդոր՝ մի հեկտար ցանքի համար: Յերկրորդ նոսրացման ժամանակ անհրաժեշտ ե բացի ձակնդեղի ավելորդ բուլսերից, շարքերից մաքրել և մոլախոտերը, իսկ շարքամիջերը՝ փխրեցնելու համար գործածել պլանետներ կամ ուրիշ գործիքներ:

Յերկրորդ նոսրացումից հետո կատարվում ե միայն շարքամիջերի փխրեցում՝ ձիով կամ տրակտորի ուժով: Մինչև շարքերն իրար կպչելը (լցվելը) պետք ե կատարել յերկու փխրեցումից վոչ պակաս:

Ճաճնդեղի խնամքի բոլոր աշխատանքների ընթացքում շատ զգույշ պետք ե լինել, վորպեսզի տերևները չփառին և բույսերը հողով չծածկվին:

Շարքերը լցվելու վայրկյանից ճաճնդեղի խնամքը վերջանում եւ:

Զեղու տեխնիկան.—Զրովի պայմաններում, ճաճնդեղի մշակության ժամանակ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել վոռոգման խնդիրների վրա: Ճաճնդեղի ցանքը, ինչպես ասացինք, կատարվում է վաղ գարնանը, հացարույսերի ցանքից հետո, այն հաշվով, վոր սերմերը ծլեն կամ աշնանից կուտակված խոնավության շնորհիվ, կամ գարնան անձրեններից, իսկ յեթե յեղանակը չորային ե գնում, անհրաժեշտ է լինում ցանքը ջրել: Առհասարակ ցանքը ջրելուց պետք է խուսափել և ջուր տալ միայն անհրաժեշտության դեպքում, վորովհետև ջրելուց հողը կեղեակալում ե և սերմերի մեծ մասը չեն ծլում: Համենայն դեպս, կեղեառաջանալու դեպքում, պետք է միջոցների դիմել կեղեր կռտընելու համար: Ծիլերը յերեալուց հետո ճաճնդեղը սկզբնական շրջանում պետք է ուշուց ջրել և խոնավությունը հողում պահելու համար հաճախակի փխրեցնել, իսկ ջուր տալիս են, յերբ բույսերն ընդունում են մուգ կապտականաչ գույն: Հետագայում, յեղանակները տաքանալու և բռւյսի դարգանալու հետ միասին ջուրն ավելի հաճախ են տալիս, մանավանդ արմատապտուղը լցվելու ժամանակ: Բերքաժամանակը կանոնավոր կատարելու և արմատապտուղները հողից չոր վիճակում հանելու համար, վերջին ջուրը պետք է տալ բերքահավաքից 20—25 որ առաջ, վորպեսզի բերքահավաքի ժամանակ հողը քեշ վիճակում լինի: Ջրելու բույրը դեպքերում ել ջուրը պետք է տալ բարակ շիթով և չփառողել ցանքերը: Տարբեր հողային և կլիմայական պայմաններում ջրելու ընդմիջումները տարբեր են լինում (Ս. Խ.):

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԲԵՐՔԱՎԱՎԱՐԸ

Յանքից 50—60 որ հետո ճաճնդեղի արմատները հառնում են 4—5 սանտիմետր հաստության: Նրանք կարելի յե դորձածել կերակրի համար և վաճառել կապերով, իբրև թարմ բանջարեղեն: Դա ճաճնդեղի ամրան սկզբի և վաղ աշնան բերքահավաքն եւ:

Այդ վիճակում մննդանյութ տալիս են թե մատղալ արմատապտուղը, թե տերևները Մատղաշ արմատները տերևներով հանելին սկսվում է ըստ նրանց հասունության և դադարեցվում է աշնան բերքահավաքից 35—40 որ առաջ:

Մատղաշ ճաճնդեղը պետք է սկսել հանել հողամատի մի կողմից և աստիճանաբար առաջ գնալ ամբողջ հողամասավ: Բույսերը հանվում են մեկումեջ այնպես, վոր հանելուց հետո նրանք ունենան շարքերում մեկը մյուսից վերջ նական տարածությունը: Մատղաշ վիճակում ոգտագործվող ճաճնդեղը հանելու աշխատանքները չեն կարելի յերկարագել, վորովհետև բույսերի խտացումից արմատները չեն կարողանում նորմալ չափով զարգանալ և աշնանը կստացվեն շատ մանր արմատներ, վորոնք անպետք են:

Ճաճնդեղի մատղաշ արմատները յերկար չեն դիմանում: Նրանք պետք է հանել այն հաշվով, վորպեսզի իրացվեն մոտակա մեկ-յերկու որում: Կարճ ժամանակ այն կարելի յե պահել սառը նկուղում կամ սառցարանում:

Սեպտեմբերին ճաճնդեղի դաշտի ընդհանուր տեսքը խիստ փոխվում է: Բույսերն սկսում են թառամել, նրանց վրա յերեւում են շատ չորացած և դեղնած տերևներ, մնացած կենդանի տերևներն ստանում են մուգ կարմրավուն գույն: Յեթե այդ ժամանակ կշռենք արմատներն ու տերևները, կստացվի, վոր տերևների քաշը 3 անգամ պակաս և արմատների քաշից: Ճաճնդեղի այդպիսի դրությունը նրա հաստացման նշանն եւ: Անհրաժեշտ և սկսել բերքահա-

վաքը, վորը պետք ե վերջացնել մինչև ուժեղ սառնամանիքներ սկսվելը։ Առաջին թեթև 1—1^{1/2} աստիճան սառնամանիքներին ճակնդեղը դիմանում է, բայց 3⁰-ից բարձր սառնամանիքները վատ են ազդում արմատների դիմացկունության վրա՝ ձմռանը պահելիս։

Ճակնդեղը հանելու մոտավոր ժամկետը՝ հյուսիսային և լեռնային շրջանների համար՝ սեպտեմբերի 15-ն ե, իսկ ավելի հարավում ճակնդեղը հանում են սեպտեմբերի վերջերից մինչև հոկտեմբերի վերջը։

Ճակնդեղի կլոր և տափակ սորտերի բերքահավաքը կարելի յե հետառությամբ կատարել ձեռքով, առանց վորեե մեքենայի։ Սակայն մեծ տարածություններ լինելու դեպքում ճակնդեղը կարելի յե հանել մի կորպուսանի գութանով, նրանից հանելով թերը ճակնդեղը գութանով հանելու դեպքում մի հեկտարը հավաքելու համար պահանջվում է 20—25 մարդ, իսկ ձեռքով հանելու դեպքում՝ 25—30 մարդ։

Նշանակալից չափով ավելի աշխատանք ե պահանջվում ճակնդեղի յերկար սորտերի մի հեկտարի բերքահավաքի համար։ Այդ ճակնդեղի հողից հանելը պիտի կատարել հատուկ ճակնդեղահան մեքենաներով և գութաններով։

Հանելու ժամանակ վնասված արմատները ձմեռը պահելու ժամանակ վոչ միայն իրենք շատ շուտ հիվանդանում են, այլև միաժամանակ վարակում են և առողջ արմատները։ Դրա համար ել ճակնդեղի արմատները պետք ե հանել և մաքրել զգուշությամբ։ Նցանք չի կարելի չանդուել, խփել և տրորել։ Յեթե արմատները հատկացվում են սերմացվի համար, այդ դեպքում պետք ե վնասվելուց պահպանաց գագարի բողոքը։

Սերմացվի համար հատկացրած արմատների կանոնավոր մաքրումը կոնաձև մաքրումն ե։ Այդպիսի մաքրումից գագաթի և կողքերի բողոքները չեն վնասվում։ Վոչ

սերմացու ճակնդեղի արմատները մաքրելու ժամանակ տերմեները կտրում են ուղիղ գագաթից, բայց այնպես, վոր ճակնդեղի մսանյութը չվնասվի։ Թողնված տերեակոթերի յերկարությունը մի սանտիմետրից ավելի չպետք ե լինի։

Մաքրված արմատներն ընտրում են ըստ նրանց վորակի։ Մի կույտում ջոկում-դնում են բոլորովին առողջ, նորմալ մեծության և կանոնավոր ձևի արմատները, վորոնք կարելի յե յերկար ժամանակ պահել։ Մյուս կույտում դնում են նորմալ մեծություն ունեցող, բայց քիչ վնասված և հիվանդության նշաններ ունեցող արմատները։ Այդ արմատները պետք ե ոգտագործել առաջին հերթին։ Յերբորդ կույտում դնում են մանր արմատները, վորոնք կամ պահվում են մինչև գարուն և գարնանը տնկվում են կանաչ տերևներ ստանալու համար, կամ թե ոգտագործվում են տնտեսությունում։ Առանձին են դարսվում հիվանդ և ալղանդակ արմատները, վոր գործ են ածում իբր անասունների կեր։

Հանած ու տեսակավորած արմատները չի կարելի նույնիսկ կարճ ժամանակով թողնել բացությա։ Քամոտ և արեւոտ յեղանակին նրանք շուտ չորանում են և թառամում։ Այդպիսի արմատները վատ են պահպանվում։ Կազմ ժամանակով արմատների կույտը կարելի յե ծածկել միայն տերևներով։ Իսկ յեթե արմատները միքանի որով պիտի մնան դաշտում, այդ դեպքում տերևների վրայից ծածկում են և հողով։ Իսկ ընդհանրապես պետք ե կանոն ընդունել, վոր համար արմատները դաշտում չպետք ե պահել։ Անսիջապես պետք ե կրել և տեղափորել պահեստում։

Ճակնդեղի տերմեները շատ մնադարար են, դրա համար ել այն պիտի ոգտագործել իբր անասունների կեր՝ թարմ վիճակում կամ խառնել սիլոսին։

ՎՈՐՏԵՂ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ՃԱԿՆԴԵՂԸ՝ ԶՄԵՌԸ

Ճակնդեղը պահում են հատուկ բանջարապահեռաներում, խրամատներում և վերերկրյա բուրգերում։ Նկարագրենք պահպանելու տվյալ ձևերից յուրաքանչյուրն առանձին։

Նկուղ-բանջարապահնեսներում ամբարելը.—Առաջին գործը պահեստները ժամանակին նախապատրաստելն եւ Դրանք դեռ ամառվանից պետք եւ մաքրված լինեն աղբից, չորացված, նորոգված և ախտահանված լինեն՝ կրով սղի-ատկեցնելու միջոցով։

Ճակնդեղի արմատները դարսվում են պահեստի բաժանմունքներում (դարձներում): Բաժանմունքների շափերը՝ լայնությունը 2 մետր, յերկարությունը՝ կախված եւ պահեստի պատերի յերկարությունից (ամբողջ պատի յերկարությամբ), իսկ բարձրությունը՝ մինչև 1,25 մետր։

Անհրաժեշտ ե խիստ հետևել, վոր պահվող արմատները թրջված և ցեխուա չլինեն, նույնպես և պահեստները լցնելու ժամանակ՝ ծղոտ, աղբ և տերևներ չընկնեն։ Հաջող պահպանելու ամենակարենոր պայմանը մաքրությունն եւ։

Ճակնդեղի արմատները պետք եւ պահվեն 1—3 տարին տաքության մեջ։ Զերմությունը չափելու համար պահեառում պետք եւ լինեն ջերմաչափեր, վորոնք կախվում են մի-մի հատ մուտքի դռների մոտ և յերկուական մեջտեղում՝ պետնից 1,25 մետր բարձրության վրա և բաժանմունքների յերկորդ շարքում, յեթե այդպիսին կա։ Սովորաբար արմատները լցնելու վայրկաւանին ջերմությունը նկուղում չատ ամելի բարձր եւ լինում այն ջերմությունից, վոր արմատները պահելու համար պահանջվում եւ։ Դրա համար եւ լցնելուց առաջնական իշեցնելու և հասցնելու նորմային։ Դրա համար պետք եւ պահեստն ուժեղ կերպով սպափակել՝ գիշերը և հով որելին

բաց անելով գոները, լուսամուտները և խողովակները։ Տաքորերին գոները և լուսամուտները փակում են։

Սառնամանիքներն սկսվելիս, յերբ պահեստներում ջերմաստիճանն արդեն իջնում է մինչև 3-ից—4⁰ ըստ Յ. գոները և լուսամուտներն ամուր ծածկվում են և տաքացվում։ Կայուն՝ 2-ից—3⁰ ջերմությունն լինելու դեպքում պետք եւ ծածկել և ողնան խողովակները։ Հետազայում, ջերմաստիճանը բարձրանալիս, նրանք բաց են անում և պահեստներն ոդափոխում են, վորպեսզի ստացվի պահանջվող ըստ Յ. 2—3⁰ ջերմությունը։ Զերմությունը մինչև 1 աստիճան իջնելու դեպքում պետք եւ դոները տաքացնել ծղոտով և թողնել միայն մուտքի անցքը, թաղիք կախելով այն ծածկելու համար։ Լուսամուտները և անկյունները պետք եւ գոմազը լցնել։

Հնգորյակում մի անգամ պետք եւ արմատների ուշադիր ստուգում կատարել։ Յեթե ստուգումը կավարգի, վոր արմատներն առողջ են, այդ դեպքում չեն վերադասավորում։ հակառակ դեպքում արմատապտուղները պետք եւ անպայման ջոկել և վերադասավորել։ Բոլոր հիվանդ արմատները պետք եւ հեռացնել։

Ինչպես պատրաստել խրամատները յեվ բուրգերը։ Ճակնդեղը պահելու խրամատները պետք եւ փորել հարթ կամ քիչ թեք տեղում։ Հողամասն անպայման պետք եւ չոր լինի։ Բոլորովին անպետք են այն տեղերը, վորոնք դարնանը կամ աշնանը կարող են լցվել ջրով, նույնպես և ստորերկրյա բարձր ջրի բով խոնավ տեղերը։ Փորելիս խրամատներն այնպես պետք եւ դասավորված լինեն, վոր ճանապարհ լինի ճակնդեղի փոխադրության համար։ Խրամատների միմյանցից հեռավորությունը պետք եւ լինի 5 մետր։ Նրանց սովորական յերկարությունը 10 մետր ե, խորությունը՝ 80—100 սանտիմետր, լայնությունը՝ 100 սանտիմետր։ Խրամատի յերկարությամբ լուրաքանչյուրը 5

մետրից հետո թողնվում է 50 սանտիմետր լայնությամբ միջնապատ:

Խրանատներն ըստ յերկարության պետք է դասավորել տվյալ տեղում տիրող քամիների ուղղությամբ:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ խրանատներ շինած տեղում ձևունը պահպանելու համար: Այդ նպատակին համուռմ են ցցերից և տախտակներից ցանկապատ շինելով և այլն:

Այն տեղերում, վորտեղ ստորերկրա ջրերը բարձր են և խրամատ փորելը դժվար է, ճակնդեղը պահում են բուրգերում:

Բուրգերի փոսերի խորությունը լինում է 10—25 սանտիմետր, լայնությունը՝ 2 մետր, յերկարությունը՝ 10—15 մետր, վորտեղ ճակնդեղը դարսվում է 1,25 մինչեւ $1\frac{1}{2}$ մետր բարձրությամբ:


Խրամատների և բուրգերի անհրաժեշտ քանակը վորշելու համար հետեւալ ձեռվ են հաշվում: Մի հեկտարից ճակնդեղի արմատների միջին բերք ստացվում է 15—20 տոնն: 10 մետր յերկարություն, 1 մետր խորություն և 1 մետր լայնություն ունեցող խրամատը՝ հաշվելով դարսվող ճակնդեղի բարձրությունն 80 սանտիմետր, տեղավորում է 5 տոնն ճակնդեղի արմատ (16—17 հազար արմատ): Մի բուրգում, վորի յերկարությունը 15 մետր է, լայնությունը՝ 2 մետր և դարսված ճակնդեղի բարձրությունը՝ 1,5 մետր, տեղավորվում է մինչև 10 տոնն (33—34 հազար արմատ): Հետեւապես մի հեկտարի բերքը դասավորելու և պահելու համար անհրաժեշտ կլինի 3—4 խրամատ կամ 2 բուրգ:

Յերբ են անհրաժետ ոդափոխ խողովակներ.—Ոդափոխ խողովակներն անհրաժեշտ են, յերբ կարիք է լինում ճակնդեղի արմատները պահեստ տանել նախքան կայուն ցրտերն ընկնելլ: Յեթե տաք յերկարատե աշուն և լինում,

այդ գեղքում, առանց ոդափոխ խողովակների, խրամատներում և բուրգերում ջերմաստիճանն ուժեղ բարձրանում է, արմատներն սկսում են ծլել և հիվանդանալ:

Ոդափոխ խողովակներ պետք չեն, յերբ ճակնդեղը պահում է խրամատներում՝ հողով ծածկված շերտերով (մի շերտ ճակնդեղ, մի շերտ հող) և այն գեղքում, յերբ ճակնդեղը խրամատ են լցնում չոր և ցուրտ յեղանակին:

